ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 Նոյեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

158
(3008)

100 դրամ

Ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՓԱՅՏԻԿԸ» ՄԻԱՅՆ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ Է

ՔՊ-ական այս պատգամավորի համար էլ հեղափոխությունը արգասաբեր էր:

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Տաթեւիկ Գասպարյանը, ով խորհրդարանում մշտապես լռակյաց է, հեղափոխությունից հետո գույքերի առքուվաճառքի մեջ է եղել: Այսինքն՝ ՔՊ թիմում եւ խորհրդարանում իշխանության որոշումներին «կողմ» քվեարկելու համար գործունեություն ծավալող Գասպարյանը, առիթից օգտվելով, ունեցվածք է կուտակում:

Օրինակ՝ հեղափոխությունից հետո՝ 2022 թվականին, նա ձեռք է բերել հողամաս Աբովյան քաղաքում, իսկ 2023 թվականին Առինջ գյուղում՝ անհատական բնակելի տուն:

Դատելով վարկային մնացորդից՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ Գասպարյանը նաեւ հիփոթեքով գնած բնակարան ունի, որի մայր գումարի մնացորդը կազմել է 43 մլն 232 հազար դրամ:

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամի ամուսինը՝ Արսեն Մխիթարյանը, որ շարքային ինժեներ է Ազգային անվտանգության ծառայությունում, հեղափոխությունից հետո բախտ է ունեցել ժառանգություն ստանալ բնակարան Երեւանում եւ ձեռք բերել 2 ավտոմեքենա:

Հարցն այն է, որ ՀՀ ազգաբնակչության պատկառելի մասը օր օրի ընկղմվում է վարկերի, պարտքերի մեջ, բռնում է արտագաղթի ճանապարհը, իսկ իշխանության ոչ մի ներկայացուցչի կամ նրա ընտանիքի անդամի (տվյալ դեպքում ամուսնու) համար գոյություն չունի ոչ մի նյութական անկում, ամենուր վերելք է՝ բնակարաններ, ավտոմեքենաներ, դրամ:

Փաստորեն, էվոլյուցիա ապահովող կախարդական փայտիկը Նիկոլ Փաշինյանը միայն իր թիմակիցների համար է օգտագործում:



ՔՊ-ն գտել է Գյումրիում ստեղծված ճգնաժամային իրավիճակի լուծման տարբերակը: Արդեն տեւական ժամանակ է՝ Գյումրիում անիշխանություն է. քաղաքական ճնշման արդյունքում համայնքապետ Վարդգես Սամսոնյանի տված հրաժարականից հետո Հայաստանի երկրորդ քաղաքը ղեկավար չունի: ՔՊ-ն ստիպված է նոր ընտրությունների գնալ Գյումրիում, սակայն այստեղ էլ խնդիրներ կան: Բանն այն է, որ ընտրությունների կազմակերպումը, ըստ էության, առանց գործող համայնքապետի, հնարավոր չէ: Օրինակ՝ ՏԻՄ մասին օրենքում հստակ սահմանվում է, որ նախընտրական փուլում, ԸՕ-ի սահմանված կարգով, համայնքապետն է որոշում համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված տեղերը, ապահովում է տեղամասային կենտրոնում բնականոն քվեարկության համար անհրաժեշտ կահավորումը կամ վերացնում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառները: Ստացվում է, եթե անգամ ընտրությունների օր նշանակվի, համայնքը ղեկավար չունի, որպեսզի այս գործառույթներն իրականացնի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ն վարչության նիստում երկար փնտրտուքներից հետո «գտել» է խնդրի լուծման բանալին. փոփոխություններ կարվեն ՏԻՄ մասին օրենքում, որպեսզի խոչընդոտները վերացվեն ու կարողանան նոր ընտրություններ անել եւ իշխանություն վերցնել Գյումրիում: Իսկ թե ինչ փոփոխություններ կանեն օրենքում՝ դրա վերաբերյալ ՔՊ-ականները դեռ իրավաբանների հետ քննարկումներ են անցկացնում: Պետք է լինի օրենք՝ Գյումրիում «ՔՊ հաղթանակն ապահովելու մասին»:

ԱԺ պատգամավոր Արմենուհի Ղազարյանը ավելի քան համեստ ունեցվածքով շարքային քաղաքացի էր, երբ վրա հասավ հեղափոխությունը: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է փաստական տվյալներ. Ղազարյանը, ով ներկայացրել է պաշտոնը ստանձնելու մեկ հայտարարագիր, ըստ դրա՝ ունեցել է 100 հազար դրամ կանխիկ գումար եւ ստացել է չնչին աշխատավարձ ինչ-որ ՊՈԱԿ-ից եւ ԱԺ աշխատակազմից (փաստաթղթերը՝ ArmLur.am կայքում): Սակայն իշխանական պատգամավորը ամիսներ առաջ՝ 2023 թվականին, Երեւանում միանձնյա կարգով գնել է բնակարան: Բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 14 մլն 783 հազար դրամ: ՔՊ-ականները կպաշտպանվեն՝ հիշեցնելով իրենց «փրկօղակ» վարկը. այդ դեպքում հարց՝ բանկերը ենթադրյալ վարկը ինչի՞ հիման վրա են տվել այժմ արդեն բազմաբնակարան ՔՊ-ականներին, ո՞ր գույքի գրավի դիմաց, թե՞ իշխող ուժի մանդատը բավական է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Կենտրոնի թաղապետարանի պաշտոնյաների քրեական գործով մի կին է անցնում: Իրավապահներին տեղեկություններ են հասել, որ Կենտրոնի թաղապետարանի պաշտոնյաները կոնկրետ անձանցից, Կենտրոն վարչական շրջանում տերմինալի եւ սուրճի սարքեր տեղադրելու համար, գումար են ուզել: Ավելին՝ իրավապահների ձեռքում հայտնվել է խոսակցության փաստ՝ ինչպես է թաղապետարանի պաշտոնյաներից մեկը զանգել կնոջը ու ասել՝ կնի՛կ, էսօր 600 դոլար գրպանդ մտավ: Հիշեցնենք, որ ArmLur.am-ին հայտնի էր դարձել, թե Կենտրոնի թաղապետարանից ում են իրավապահները ձերբակալել. նոյեմբերի 12-ին իրավապահները Կենտրոնի թաղապետարանում գործողություններ էին իրականացրել աշխատակազմի առեւտրի եւ սպասարկումների բաժնում: Արդյունքում՝ ձերբակալվել են 4 անձինք, որոնցից 3-ը պաշտոնատարներ են: Ավելի ուշ նախաքննական մարմինը հայտնեց, որ պաշտոնյաները կալանավորվեցին: Կալանավորվածներից մեկը առեւտրի եւ սպասարկումների բաժնի պետ Արսեն Աղաբեկյանն է. ձերբակալվել էր նաեւ նրա տեղակալը ու եւս 2անձ:

ԶՐՈՒՅՑ

ԱԺ-Ն ՈՒԶՈՒՄ Է՝ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԼԻՆԵՆ ԻՐԵՆ

Շրջանառության մեջ է դրվել «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը:

«Ժողովուրդ» օրաթերթը թեմայի վերաբերյալ զրուցել է ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի հետ, ով նախագծի համահեղինակներից է:

-Պարոն Գաբրիելյան, շրջանառության մեջ է դրվել Ազգային ժողովի կանոնակարգ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը, որով պարտադիր է դառնում, որ քննչական կոմիտեի նախագիծը, հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը, պետական եկամուտների կոմիտեի նախագահը եւ եւս մի շարք պաշտոնյաներ ամեն տարի՝ մինչեւ ապրիլ, գան Ազգային ժողով եւ իրենց ղեկավարած գերատեսչության նախորդ տարվա աշխատանքները ամփոփող զեկույց ներկայացնեն. քանի որ Դուք նույնպես նախագծի համահեղինակ եք, հետաքրքիր է հասկանալ, թե որն է եղել նախագծի բուն նպատակը: Հատկապես Արգիշտի Քյարամյանի մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպից հետո այս նախագիծը մի փոքր այլ կերպ է դիտվում: Ստացվում է, որ Ազգային ժողովը փորձում է «հաշվետու դարձնել» քննչական կոմիտեին եւ մյուս կառույցներին:

-Ճուտ ժամանակագրորեն այդպես չէ իրավիճակը: Նախագիծը շրջանառության մեջ է դրվել մինչեւ վերոնշյալ միջադեպը, ինչը նշանակում է, որ դրա հետ կապ չունի, քանի որ կանխատեսել, որ նման միջադեպ կլինի, նույնիսկ անիմաստ է քննարկել: Մի շտկում եւս՝ բոլոր զեկույցները ապրիլին չեն, դրանք տարբեր ժամկետներում են նախատեսված: Խնդիրն այն է, որ մենք կարծում ենք, թե այսօր մի շարք ոլորտներում, որոնք, ըստ էության, մեր նախագծում իրենց կառույցների տեսքով արտացոլված են, աշխատում են հանրության լայն շրջանակների հետ: Կան հանրության կողմից բարձրաձայնվող բազմաթիվ հարցեր, խնդիրներ, դժգոհություններ եւ, որպես խորհրդարանական երկիր, կարծում ենք, որ ճիշտ է, որպեսզի այդ կառույցների ղեկավարները տարեկան մեկ անգամ, ինչպես գլխավոր դատախազն է գալիս, գան ու զեկույցով ներկայանան՝ իրենց ղեկավարած գերատեսչության նախորդ տարվա գործունեությունը ամփոփ ներկայացնելու:

Պետք է, օրինակ, գան քննչական կոմիտեի ղեկավարը, հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարը, պետական եկամուտների կոմիտեի նախագահը եւ ինքնավար մարմինները, ինչպիսին են հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը եւ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Սրանք այն մարմիններն են, որոնցից առնվազն վերջին թվարկվածների ղեկավարներին մենք ենք ընտրում: Հետեւաբար, կարծում ենք, որ տարին առնվազն մեկ անգամ պետք է գան Ազգային ժողով եւ ամփոփ ներկայացնեն նախորդ տարին, պատասխանեն պատգամավորների հարցերին, լսեն առաջարկություններ, այդ թվում՝ քաղաքացիների կողմից:

-Փաստորեն, հաշվետու են լինելու Խարհրդարանին: Արդյոք այսպես Ազգային ժողովը միջամտած չի՞ լինում մարմինների գործունեությանը:

-Եթե ոչ բոլորը, ապա մեծ մասը, այսպես թե այնպես, գրավոր ձեւով ամփոփ հաշվետվություն են ներկայացնում մարմիններին տարեկան աշխատանքների վերաբերյալ: Մենք այս նախագծով պարզապես արարողակարգային փոփոխություն ենք անում: Կարծում եմ, որ այդ ձեւաչափում որեւէ խնդիր չկա, եւ շատ ուրախ եմ, որ մեր ընդդիմադիր գործընկերները նույնպես կողմ քվեարկեցին նախագծին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՈՐՏԵ՞Ղ Է ՆՈՐ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԿԱՌՈՒՑՎԵԼՈՒ

Այսօր՝նոյեմբերի 14-ին, կայանալու է կառավարության հերթական նիստը, որի օրակարգում ընդգրկված է 13 հարց:

13 հարցերից զեկուցվող են ընդամենը 4-ը: Նշենք, որ վերջին շրջանում կառավարության հարցերի մեծամասնությունը չզեկուցվող են:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ Լոռու մարզպետ Արամ Ղազարյանը գրությամբ ՀՀ ՏԿԵ նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե է ներկայացրել Գյուլագարակ համայնքի ավագանու՝ 21.05.2024թ. թիվ 50-Ա որոշումը եւ 13.09.2024թ. թիվ 91-Ա որոշումը՝ համաձայն որոնց առաջարկվում է ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի սեփականություն հանդիսացող Գարգառ Կենտրոնական փողոց 50/1 հասցեում գտնվող 0.11977 հեկտար մակերեսով հողամասը եւ մարզ Լոռի, համայնք Գյուլագարակ գյուղ Գարգառ Կենտրոնական փողոց 50 հասցեում գտնվող 178.99 քառ. մետր մակերեսով մանկապարտեզի շենքը, ինչպես նաեւ դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0.05688 հեկտար մակերեսով հողամասը նվիրատվությամբ փոխանցել Հայաստանի Հանրապետությանը:

Ըստ կառավարության որոշման՝ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի վարչական տարածքում կառուցվելու է կրթահամալիր նվիրաբերվող հողամասի տեղում:

Այս ամենի մասին զեկուցելու է տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԻՆՉ ՊԱՇՏՈՆ Է ՈՒՆԵՑԵԼ ՍԱՏՄ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐԸ

Արմեն Դանիելյանը, ազատվելով վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալի պաշտոնից, նշանակվեց սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար:

Դանիելյանը կառավարությունում համարվում է վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի «կադրը»: «Փաստը» գրել էր, որ Դանիելյանը ՍԱՏՄ ղեկավար դառնալու ցանկություն է ունեցել դեռեւս 2022 թվականին, երբ ակտիվորեն աշխատել է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանի դեմ, սակայն Նիկոլ Փաշինյանը նրա թեկնածությունը չի հաստատել: Այժմ արդեն, կարծես, իրավիճակ է փոխվել...

Արմեն Դանիելյանը եղել է նաեւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության պետի տեղակալ դեռ հեղափոխությունից հետո:

2024 թվականի տարեսկզբին Դանիելյանը կատարում էր սպանդանոցային ապահովման աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները: Դեռ այս ոլորտն ամողջովին չհամակարգած՝ Արմեն Դանիելյանը դարձավ ՍԱՏՄ ղեկավար:

Համաձայն կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրերի ռեեստրի՝ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ Արմեն Դանիելյանը նախկին պաշտոնում հայտարարագրել է մեկ անշարժ գույք, որը ՀՀ օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված եւ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված այն շինությունները, որոնք դեռեւս չի ստացել իրավունքների պետական գրանցում: Տրանսպորտային որեւէ միջոց Դանիելյանը չի հայտարարագրել:

Արմեն Դանիելյանը, 2023 թվականի հայտարարագրի համաձայն, վարչապետի աշխատակազմից ստացել է 11 մլն 611 հազար դրամ աշխատանքի վարձատրություն: Դանիելյանի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1 մլն 600 հազար դրամ: Դանիելյանի կողմից շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարը կազմել է 4 մլն 800 հազար դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ՓՈՒԼ ԿՄՏՆԵՆ

Երեւանի եւ Բաքվի միջեւ խաղաղության պայմանագրի շուրջ բանակցությունները դեկտեմբերին նոր փուլ կմտնեն, ասել է Ադրբեջանի նախագահի խորհրդական Հիքմեթ Հաջիեւը:

Նրա խոսքով՝ ՀՀ-ն ու Ադրբեջանը դեկտեմբերին կվերադառնան խաղաղության պայմանագրի տեքստի քննարկմանը:

Ինչպես Հաջիեւը նշել է՝ փաստաթղթի տեքստում կան որոշակի հարցեր. «Ուստի փորձագետների մակարդակով քննարկումները եւ բանակցությունները շարունակվում են: Հայկական կողմը ժամանակին չպատասխանեց տեքստի վերաբերյալ մեր առաջարկներին:

Դեկտեմբերից նոր գործընթաց կսկսվի»:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԿՐՃԱՏՎԵ՞Լ Է

Արդարադատության միջազգային դատարանը վճռել է, որ իրավասություն ունի քննելու 2020-2023 թվականների պատերազմի ընթացքում եւ դրանից հետո սպանությունների, խոշտանգումների, անմարդկային վերաբերմունքի, բռնի անհետացումների եւ կամայական ձերբակալությունների վերաբերյալ Հայաստանի դիմումները:

Այս մասին X-ում գրել է Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը՝անդրադառնալով Արդարադատության միջազգային դատարանի 2024 թվականի նոյեմբերի 12-ի վճռին:

«Արդարադատության միջազգային դատարանը իրավասու չէ քննարկելու Ադրբեջանի հայցերը ԼՂ առաջին պատերազմի վերաբերյալ մինչեւ 1996 թվականը: Հայաստանի դեմ Ադրբեջանի պահանջների շրջանակը զգալիորեն կրճատվել է»,- գրել է Կիրակոսյանը:

Հիշեցնենք, որ երեկ Արդարադատության միջազգային դատարանը մերժել է Բաքվի ներկայացրած նախնական առարկությունները՝ «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործի շրջանակում:

ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՍԽԵՄԱՅԻ ՎՐԱ

Ադրբեջանում Միացյալ Նահանգների դեսպան Մարկ Լիբբին հայտարարել է, որ Երեւանն ու Բաքուն Վաշինգտոնի ակտիվ աջակցությամբ աշխատում են անդրսահմանային գետերի ջրային ռեսուրսների կառավարման ինտեգրված սխեմայի ստեղծման ուղղությամբ:

Այս մասին նշված է Ադրբեջանում Միացյալ Նահանգների դեսպանության X-ի միկրոբլոգում տարածված գրառման մեջ:

«Ադրբեջանի եւ Հայաստանի հիդրոլոգների եւ ինժեներների մի խումբ՝ ԱՄՆ-ի ակտիվ աջակցությամբ, աշխատում է անդրսահմանային գետերի ջրային ռեսուրսների կառավարման ինտեգրված սխեմայի վրա», - նշված է գրառման մեջ:

ԲՆԱԿԱՆ ՆՈՐ ԱՂԵՏՆԵՐԻ ՎՏԱՆԳ

Վալենսիայի, Կատալոնիայի եւ Բալեարյան կղզիների որոշ շրջաններ հայտարարել են տագնապի բարձրացված մակարդակ՝ բարդ եղանակային պայմանների պատճառով, հայտնում է EFE գործակալությունը:

Ըստ կանխատեսումների՝ այնտեղ սպասվում են հորդառատ անձրեւներ, բարձր ալիքներ եւ քամու ուժգին պոռթկումներ:

Վալենսիայում հոկտեմբերին տեղացած հորդառատ անձրեւների հետեւանքով առաջացած ջրհեղեղներից հետո վերականգնողական եւ մաքրման աշխատանքները դեռ շարունակվում են: Հոկտեմբերին աղետի զոհ է դարձել ավելի քան 220 մարդ:

Իսպանիայի բնակիչներից շատերը տեղական իշխանություններին մեղադրել են աղետից տուժած շրջաններին օգնություն ցուցաբերելու ոչ արդյունավետ միջոցների մեջ:

ԹՐԱՄՓԻ ՈՐԴԻՆ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Դոնալդ Թրամփ կրտսերը՝ ԱՄՆ նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփի ավագ որդին, չի աշխատի Միացյալ Նահանգների նոր վարչակազմում, նա կաշխատի վենչուրային 1789 Capital ընկերությունում: Այս մասին հայտնում է Bloomberg-ը ՝ հղում անելով աղբյուրներին:

Գործակալությունը գրում է, որ Դոնալդ Թրամփ կրտսերն ակտիվ դեր է խաղացել իր հոր նախընտրական արշավում:

Բացի այդ, քաղաքական գործչի որդին վերջերս իր հոր եւ երկու եղբայրների հետ մասնակցել է World Liberty Financial կրիպտոարժույթի նախագծին:

ՀՐԱՎԻՐՎԵԼ Է՝ ԴԱՌՆԱԼՈՒ BRICS-Ի ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿԻՐ

Թաիլանդը հրավեր է ստացել միանալու BRICS-ին՝ որպես գործընկեր երկիր: Այս մասին ՏԱՍՍ-ին հայտնել է դիվանագիտական աղբյուրը:

«Այո, Թաիլանդը հրավիրվել է գործընկեր դառնալու»,- նշել է գործակալության զրուցակիցը:

BRICS խումբը հիմնադրվել է 2006թ.: 2011 թվականին կազմին միացել է Հարավային Աֆրիկան (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան եւ Չինաստան): Եգիպտոսը, Իրանը, ԱՄԷ-ն, Սաուդյան Արաբիան եւ Եթովպիան դարձել են ասոցիացիայի լիիրավ անդամներ 2024 թվականի հունվարի 1-ից:

Կազանում BRICS-ի գագաթնաժողովից հետո ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարեց, որ համաձայնեցվել է ասոցիացիայի գործընկեր երկրների ցուցակը:

Նրանց ամբողջական ցանկը չի նշվում: Ինչպես պարզաբանել է ՌԴ ղեկավարը, նախ հրավերներ կուղարկվեն այս նահանգներին, եւ դրական պատասխան ստանալուց հետո կհայտարարվի, թե ովքեր են այս ցուցակում:

«ԱԴՐԲԵՋԱՆԸ՝ COP29-Ը ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ՀԱՆՑԱՎՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

ԱՐՏԱԿ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ «ՖԻԳԱՐՈՅԻՆ»

Արցախ Միության նախագահ, Արցախի Հանրապետության նախկին պետնախարար եւ Մարդու իրավունքների պաշտպան Արտակ Բեգլարյանը հարցազրույց է տվել ֆրանսիական առաջատար «Ֆիգարո» ամսագրին, որը օրեր առաջ հրապարակվել է եւ՛ տպագիր, եւ՛ էլեկտրոնային տարբերակներով: Ամբողջական նյութը ներկայացվում է ստորեւ.

Նոյեմբերի կեսերին Բաքվում բացվում է կլիմայի նոր գագաթնաժողովը: Իր ավելի քան 100,000 հայրենակիցների հետ հայրենիքից բռնի տեղահանված Լեռնային Ղարաբաղի նախկին պետական նախարար Արտակ Բեգլարյանը կոչ է անում ճնշում գործադրել նախագահ Ալիեւի ռեժիմի վրա, որը, նրա խոսքերով, հայերի դեմ ցեղասպանություն է իրականացրել:

Նրա դեմքը տառապանքների հետքեր է կրում, սակայն ձայնը վճռական է: Սեպտեմբերի 19-ին Արտակ Բեգլարյանը, իր հայրենակից Գեղամ Ստեփանյանի հետ, Միջազգային քրեական դատարան (ՄՔԴ) բողոք է ներկայացրել: Նրանց ակնկալիքն է, որ Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից իրականացված հանցագործությունների վերաբերյալ հետաքննություն կսկսվի: «Սա ցեղասպանություն է: Միայն քաղաքական գործիչներն են խուսափում օգտագործել այս բառը: Վստահ եմ, որ մի օր այն միջազգային հանրության կողմից կճանաչվի»:

Ժամանակը պատահական չէ ընտրված. նոյեմբերի 11-ին Բաքվում կբացվի COP29-ը՝ կլիմայի վերաբերյալ մեծ միջազգային գագաթնաժողովը: Եվ այս ամենը տեղի է ունենում այն ժամանակ, երբ առնվազն 23 հայ գերի դեռեւս պահվում են նախագահ Ալիեւի ռեժիմի կողմից: «Իրականում բազմաթիվ հիմքեր կան պնդելու, որ գերիների թիվը մոտ է 100-ի: Մեծ մասի դեպքում նույնիսկ չգիտենք, թե արդյոք նրանք ողջ են»:

Արտակ Բեգլարյանը շատ զրկանքների է առերեսվել: Ծնվելով 1988 թվականին Ստեփանակերտում՝ Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքում, նա հիշում է մանկության բանաստեղծությունները, երգերն ու մեղեդիները: Նա լոկ չորս տարեկան էր, երբ հայրը զոհվեց ճակատում՝ ադրբեջանցի զինվորների կողմից: Երկու տարի անց՝ ընկերների հետ բակում խաղալու ընթացքում, ականի պայթյունը նրան կուրացրեց: 16 տարեկանում մայրը մահացավ սրտի կաթվածից՝ թողնելով տղային ամբողջովին միայնակ:

Չնայած այդ ամենին՝ նրան հաջողվեց սովորել Երեւանում՝ Հայաստանի մայրաքաղաքում, իսկ հետո՝ հեղինակավոր Լոնդոնի համալսարանական քոլեջում, որտեղ նրան առաջարկեցին մնալ: «Բայց ես վերադարձա հայրենիք՝ իմ ժողովրդին ծառայելու համար: Դա իմ կյանքի առաքելությունն է, որն ինձ հետ բերեց տուն»: Նա դարձավ Մարդու իրավունքների պաշտպան, ապա նախագահի աշխատակազմի ղեկավար եւ պետական նախարար:

2022 թվականի դեկտեմբերին՝ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի շրջափակման մեկնարկով, կյանքն այնտեղ աստիճանաբար անտանելի դարձավ: Կենսական ապրանքները պակասեցին՝ ձեթ, հացահատիկ եւ այլն: «Մի քանի շաբաթ շարունակ ես ու կինս հաց չէինք ուտում, որպեսզի կարողանայինք այն տալ մեր երկու դուստրերին»: 2023 թվականի սկզբին Հայաստանից էլեկտրաէներգիայի եւ գազի մատակարարումը խափանվեց Ադրբեջանի կողմից: «Ձմռանը մենք էլեկտրաէներգիա ունեինք օրական միայն 12-16 ժամով: Մարդիկ ջեռուցում չունեին, եւ դպրոցները ժամանակավորապես փակվեցին: Նույնիսկ ջրի մատակարարումը խնդիր դարձավ»:

2023 թվականի սեպտեմբերի 19-ին, երբ ադրբեջանական զորքերը վերջնականապես ներխուժեցին Լեռնային Ղարաբաղ, նա իմացավ, որ ադրբեջանական զինվորները իրեն էլ էին փնտրում: Բեգլարյանը որոշեց փախչել իր ընտանիքի հետ: «Մոտ 27 ժամ պահանջվեց՝ շուրջ 50 կիլոմետր անցնելու համար մինչեւ Հայաստանի սահմանը: Ես նույնիսկ մեքենայից դուրս չեկա. Հարազատներս վախենում էին, որ ինձ կձերբակալեն կամ կսպանեն»:

Այսօր Արտակ Բեգլարյանը փախստական է՝ բարեկամների մոտ՝ Երեւանում: «Ես մասնակի աշխատանք ունեմ՝ իմ ընտանիքի կարիքները հոգալու համար: Մնացած ժամանակ ես ակտիվորեն շարունակում եմ ջատագովել իմ ժողովրդի իրավունքների պաշտպանության համար»:

COP29-ի նախաշեմին նա կոչ է անում Ադրբեջանում պահվող բոլոր հայ պատանդների ազատման օգտին: Նա նաեւ ցանկանում է, որ Էմանուել Մակրոնը եւ Ֆրանսիայի կառավարությունը աջակցեն իրենց բողոքին Միջազգային քրեական դատարանում: Ֆրանսիացի երկու փաստաբանների՝ Կատալինա դե լա Սոտայի եւ Ֆրանսուա Ջիմերեյի կողմից ներկայացված այս բողոքը շատ քիչ հնարավորություն ունի հաջողելու, եթե չի ստանում Հռոմի Ստատուտը վավերացրած եւ ՄՔԴ իրավազորությունը ճանաչող պետություններից գոնե մեկի աջակցությունը: Նա հույս ունի նաեւ, որ միջազգային հանրությունը խիստ պատժամիջոցներ կկիրառի այդ հանցագործությունների հեղինակների նկատմամբ: «Երբ քաղաքական աջակցությունն ամփոփվում է գեղեցիկ խոսքերով եւ կարեկցանքով, դա իրական աջակցություն չէ: Դիկտատորները, հատկապես ցեղասպանությունների հեղինակները, անտեսում են հայտարարություններն ու խոսքերը»:

Չնայած իր ապրած կյանքին՝ նախկին պետական նախարարը շարունակում է մեծ հույսեր ունենալ. «Ես շատ եմ տառապել մանկությունից ի վեր, սակայն միշտ կարողացել եմ հաղթահարել այդ դժվարությունները: Եթե մենք համատեղենք մեր ջանքերը, ես հավատում եմ, որ մի օր հնարավոր կլինի հասնել խաղաղության եւ արդարության՝ ոչ միայն իմ ժողովրդի, այլեւ ողջ մարդկության համար»:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՐԴՐԱԴԱՐՁԸ

«ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՍՏԱԿ ՈՒՂԵՐՁ ԷՐ»

«Մենք պետք է ավելի շատ խոսենք քաղբանտարկյալների մասին, պետք է ավելի շատ ճնշում գործադրել Ադրբեջանի վրա:

Մենք բոլորս գիտենք, որ այն, ինչ տեղի է ունենում, ամբողջովին հակասում է միջազգային նորմերին եւ չափանիշներին, եւ մենք պետք է ցույց տանք Ադրբեջանին, որ նման պահվածքը չի կարելի հանդուրժել, հատկապես, եթե այդ երկիրը ցանկանում է դիրքավորվել միջազգային հարթակում: Սա գործողության կոչ է, որին պետք է արձագանքենք»,- The Armenian Report-ին ասել է Բաքվում ապօրինի պահվող Ռուբեն Վարդանյանի ավագ որդին՝ Դավիթ Վարդանյանը:

Նա նշել է, որ իր հայրը մեկ տարի ապրել է Արցախի ժողովրդի հետ, կարճ ժամանակով՝ երեք ամիս, զբաղեցրել է պետնախարարի պաշտոնը: Նրա աշխատանքը, սակայն, հիմնականում կենտրոնացած է եղել հումանիտար խնդիրների եւ կրթական ծրագրերի վրա. «Վերջին ութ ամիսներին նա պարզապես տեղացի էր, որը, չնայած ստեղծված ծանր իրավիճակին, շարունակում էր իրականացրել մարդասիրական եւ բարեգործական բազմաթիվ ծրագրեր»:

«Ես անհանգստանում եմ հորս համար, բայց նաեւ անհանգստանում եմ բոլոր այն հայերի համար, որոնք պահվում են Բաքվում: Կարծում եմ, որ հորս՝ Ռուբեն Վարդանյանի նման մարդու ձերբակալությունը շատ հստակ ուղերձ էր, որը հղվեց ողջ հայ ժողովրդին, այն է՝ ոչ մի հայ անվտանգ չէ, եւ նման բան կարող է պատահել բոլորի հետ», -նշել է Դավիթ Վարդանյանը:

ՄԵՂՍԱԳՐՎՈՂ ԱՐԱՐՔԸ ՉԻ ԿԱՏԱՐԵԼ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎԵՑ

ՀՀ քննչական Կոմիտեն ՀՀ քրեական դատավարության 1-ին մասի 1-ին կետով, այն է՝ մեղսագրվող արարքը չկատարելու հիմքով՝ Ասկերանի քաղաքամեջ Հայկ Ալեքսանդրի Շամիրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով եւ 457-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցրել է. այս մասին տեղեկացրել է փաստաբան Վահե Եփրիկյանը:

«Քանի որ սույն քրեական վարույթը ունեցավ հանրային լայն հնչեղություն, երկու հանգամանք եմ ցանկանում հատկապես ընդգծել

1. Քրեական վարույթի դեռ մեկնարկային փուլում՝ ս/թ. մայիս ամսից, պաշտպանության կողմը թե՛ առանձին քննչական գործողությունների ընթացքում, թե՛ դատարանում խափանման միջոցի քննության նիստերի ժամանակ հետեւողականորեն հայտարարում էր, որ մինչեւ իսկ որեւէ կերպ չի վիճարկվում առկա փաստակազմը, այսինքն՝ վարույթ իրականացնող քննչական խմբի բերած փաստարկներից հենց ուղղակիորեն բխում է, որ այս գործում բացակայում է հանցակազմը, ինչն էլ ուղղակիորեն հաստատվեց քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ: Այլ խոսքով՝ պաշտպանության կողմը հենց սկզբից նշում էր՝ վարույթ իրականացնողը Հայկ Շամիրյանի կողմից կատարված գործողությունները միանշանակ ճիշտ է ներկայացնում, սակայն անհասկանալի է՝ ինչպե՞ս է այդ գործողությունների մեջ հանցակազմ տեսնում. լավ է ուշ, քան երբեք՝ Հայկ Շամիրյանը հենց նույն վարույթ իրականացնողի որոշմամբ արդարացվեց:

2. Չափազանց կարեւոր է նաեւ ընդգծել դատավոր Ռազմիկ Մարիկյանի դերը այս քրեական վարույթի ընթացքում, քանի որ մինչդատական վերահսկողության շրջանակներում հենց նա էր խափանման միջոցների քննությունն իրականացնող դատավորը, ով այդ իրականացման, քննչական խմբի կողմից գործով հիմնավոր կասկածի եւ կալանքի հիմքերի առավել քան հիմնավորված լինելու հաստատումների ֆոնին, այնուամենայնիվ, ոչ միայն չկալանավորեց, այլեւ հետագայում առավել նվազ կերպով անձի ազատությունները սահմանափակող վարչական հսկողություն խափանման միջոցը կիրառեց: Թեեւ պաշտպանության կողմը, ինչպես վերը նշեցի, այդ նիստերի ընթացքում եւս պնդում էր, որ կալանքի հիմքերի մասին խոսելն առարկայազուրկ է, քանի որ բացակայում է հիմնավոր կասկածը, ամեն դեպքում հախուռն կալանավորումների այդ «շքերթ» օրերին դատավորը կարողացավ չշեղվել մասնագիտական բարձրությունից, կայացնել դատական ակտ՝ ելնելով սեփական ներքին համոզմունքից ու գործող օրենսդրությունից:

Հավելեմ նաեւ, որ Հայկ Շամիրյանի ազգականի՝ Կարեն Կամոյի Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական հետապնդումը՝ հավաքներին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելը, եւս դադարեցվեց մեղսագրվող արարքը չկատարելու հիմքով:

Ամփոփելով՝ շուրջ կես տարի անց՝ քննչական կոմիտեում ունենք երկու արդարացում եւ այն դեպքում, երբ դեռ ամենասկզբից պնդում էինք՝ այս քրեական վարույթներով մինչեւ իսկ գործի քննության սկզբնական փուլում իսպառ բացակայում է հիմնավոր կասկածը»,- գրել է նա:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԿԵՆՏՐՈՆԻ ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆԻՑ

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ երեկ Կենտրոնի թաղապետարանից ձերբակալված 4 պաշտոնյաները կալանավորվեցին: Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ վերոնշյալ անձանց կալանավորել են:

Նոյեմբերի 12-ին իրավապահները Կենտրոնի թաղապետարանում գործողություններ են իրականացրել: Հիշեցնենք, որ գործողություններն իրականացվել են թաղապետարանի աշխատակազմի առեւտրի եւ սպասարկումների բաժնում:

Իրավապահների կատարած գործողությունների արդյունքում ձերբակալվել է 4 անձ, որից 3-ը պաշտոնատար անձինք են:

Ովքե՞ր են ձերբակալվածները եւ ի՞նչ քրեական վարույթի շրջանակներում են ձերբակալվել Առեւտրի եւ սպասարկումների բաժնի պետ Արսեն Աղաբեկյանը եւ նրա տեղակալը:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 23-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հակակոռուպցիոն կոմիտեն նոր սկանդալ է բացահայտել Կենտրոնի թաղապետարանի աշխատակազմի պաշտոնյաների մասով: Մասնավորապես, հակակոռուպցիոն կոմիտե օպերատիվ խումբը, խմբով կաշառք ստանալու համար, Կենտրոնի թաղապետարանի երկու պաշտոնյաների է ձերբակալել: Ձերբակալվածները թաղապետարանի կոմունալ բաժնի աշխատակիցներ են եղել ու խմբով ներգավվել են կաշառքի գործընթացում:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմել է հակակոռուպցիոն կոմիտե՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվել եւ ինչ նոր բացահայտում է իրականացվել. ի պատասխան՝ լրատվական բաժնից հայտնեցին, որ Կենտրոնի թաղապետարանի երկու պաշտոնյաներ Կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում ունեն մեղադրյալի կարգավիճակ: Նրանք մեղադրվում են խմբով կաշառք ստանալու համար: Եվ ահա այս քրեական վարույթի շրջանակներում էլ հակակոռուպցիոնը մտել է Կենտրոնի թաղապետարան ու գործընթաց սկսել:

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՍՊԱՌՆԱՑԵԼ Է ԻՆՔՆԱՍՊԱՆ ԼԻՆԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նոյեմբերի 12-ին՝ ժամը 13:00-ին, Ազգային ժողովի շենքին է մոտեցել մի քաղաքացի, ով իր բանավոր հայտարարությամբ հայտնել է, որ Գավառում ունի հողային տարածքի սեփականության հետ կապված խնդիրներ:

Քանի որ խնդիրները չեն լուծվում, նա իր մոտ եղած շշով լի բենզինը կլցնի իր վրա, կիրկիզի իրեն եւ իր մոտ եղած պտուտակահանը կմտցնի կոկորդը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ իրավապահները պարզել են, որ քաղաքացին 1947 թվականին ծնված Վ. Մ.-ն է, որը Գավառ քաղաքի բնակիչ է:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ԳՈՂԱՑՎԱԾ ՀԱՅԵԼԻՆԵՐ

Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ծառայողները, իրացնելով ստացած օպերատիվ տեղեկությունները, նոյեմբերի 11-ին՝ ժամը 13:20-ին, Հալաբյան փողոցում, գողություն կատարելու, ինչպես նաեւ ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով, ձերբակալել եւ Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժին են տեղափոխել երեք երեւանցու՝ մեկի վարած «Օպելով» հանդերձ: 37-ամյա վարորդի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մոխրացած հետքերով ապակյա կաթուցիչ: Մեքենայի սրահում նկատելի էր թղթե տոպրակ՝ լցված տարատեսակ մեքենաների կողային հայելիներով, որոնք, ըստ նախնական տեղեկության, գողացվել էին մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում կայանված տրանսպորտային միջոցներից:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ նոյեմբերի 12-ից 13-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 134 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:

Մասնավորապես՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝37, թմրանյութի հայտնաբերման՝ 35, ֆիզիկական ներգործության եւ խարդախության՝ 8-ական, մարմնական վնասվածք պատճառելու՝ 6, անձնական ունեցվածքի գողության՝ 5, հոգեկան ներգործության՝ 4, շորթման, ինքնավնասման ու պաշտոնեական լիազորությունների չարաշահման՝ 3-ական, սառը զենք կրելու եւ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու՝ 2-ական, խոշտանգման, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, խուլիգանության, զենք-զինամթերքի առգրավման, թմրանյութի իրացման, ծառերը, թփերը ապօրինի հատելու, զենք-զինամթերքի ապօրինի շրջանառության, փաստաթղթեր կեղծելու, պատմության կամ մշակույթի հուշարձաններ կամ առանձնակի արժեք ունեցող առարկաներ կամ փաստաթղթեր ոչնչացնելու կամ վնասելու, պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելու, ինքնիրավչության, սեքսուալ բնույթի բռնի գործողության, բնակարանային գողության ու պետական սահմանն ապօրինի հատելու՝1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է ծառերը, թփերը ապօրինի հատելու՝1 դեպք:

Հայտնաբերվել է 4 հետախուզվող, կամավոր ներկայացել՝3-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 1 մարդ զոհվել է, 13-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 12-ից 13-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 134 դեպք, որից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԻՐԱՆՑԻ ՑՈՒՑԱՆԱԿԸ ՉԻ ՎԵՐԱՏԵՂԱԴՐՎԵԼ

Հոկտեմբերի 21-ին հայտնել էինք, որ Իջեւանի Աչաջուր գյուղից մի երիտասարդ, Աչաջուր եւ Կիրանց գյուղերում տեղադրել է բնակավայրերի անունների գրառումներով «սիրո խոստովանության (Ես սիրում եմ Կիրանցը...)» ցուցանակներ: Կիրանցում սահման հանդիսացող պատի դիմաց զետեղված ցուցանակը, երկու շաբաթ տեղադրված մնալուց հետո, պետական իշխանության պահանջով հանվել է այն պատճառաբանությամբ, որ այն անօրինական է տեղադրված: Աչաջուր գյուղում տեղադրված ցուցանակը եւս հանվել է, որպեսզի Կիրանցում ցուցանակի հանվելը աչք չծակի: Կիրանց գյուղի մեր աղբյուրները հայտնում են, որ Կիրանցում ցուցանակ-գրառումը հանվել է ադրբեջանական կողմի պահանջով, քանզի ցուցանակը ադրբեջանցիներին տեսանելի է՝ Կիրանցի տարածքները հանձնելուց հետո նոր ձեւավորված սահմանագծից: Ցուցանակի հանվելուց անցել է ավելի քան 20 օր, սակայն այն Կիրանցում չի վերատեղադրվել:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՄԵՆ ՏԱՐԻ ՆՎԱԶՈՒՄ Է

Ծնելիության նվազման, շարունակվող արտագաղթի հետեւանքով Տավուշի մարզի բնակչությունը շարունակում է նվազել: Դրանով պայմանավորված՝նվազում է նաեւ մարզի հանրակրթական աշակերտների, դպրոցների շրջանավարտների թիվը: Տավուշի մարզպետարանիից հայտնել են, որ 2021-2022 ուստարում մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտների թիվը եղել է 1124, 2022-2023 ուստարում՝ 1040, 2023-2024 ուստարում՝ 984: Վերջին 2 տարում մարզի դպրոցների շրջանավարտների թիվը նվազել է 140-ով:

ԻՆՉԵ՞Ր Է ԹԱՔՑՆՈՒՄ ՔԱՎՈՐ ՄԱՐԶՊԵՏԸ

Նոյեմբերի 7-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝մասնավորապես հարցնելով. «2024 թվականի անցած ժամանակահատվածում Նոյեմբերյան, Բերդ, Դիլիջան քաղաքներում քանի՞ անգամ եք քաղաքացիների ընդունելություն կատարել, ո՞ր օրը, ո՞ր քաղաքում, ամեն ընդունելությանը քանի՞ քաղաքացու եք ընդունել: Տավուշի մարզի պետական բժշկական հիմնարկներում ներկայումս բժշկի քանի՞ թափուր հաստիք կա, այդ բուժհիմնարկներում ընդհանուր առմամբ քանի՞ կենսաթոշակառու բժիշկ է աշխատում: Տավուշի մարզպետարանից պատասխանել են. «Այդ հարցերի վերաբերյալ Ձեզ նախկինում պատասխանվել է»: Ակնհայտ սուտ պատասխան է. նախկինում այդ հարցերին մարզպետարանը չի պատասխանել: Կարող ենք կռահել, թե ինչու մարզպետը քաղաքացիների ընդունելության մասին հարցին չի պատասխանել: Չի պատասխանել, որովհետեւ նա այս տարի մարզի Նոյեմբերյան, Բերդ, Դիլիջան քաղաքներում քաղաքացիների ընդունելություն ընդհանրապես չի կատարել: Մարզի պետական բժշկական հիմնարկներում բժիշկների թափուր հաստիքների, կենսաթոշակառու բժիշկների թվի մասին տեղեկատվությունը թաքցնելու իմաստը ո՞րն է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԿԿՐՃԱՏՎԵՆ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պետական բյուջեի միջոցներով դպրոցների եւ մանկապարտեզների կառուցման շինարարական աշխատանքները հնարավոր կլինի մեկնարկել ավելի սեղմ ժամկետում: Այդ նպատակով ֆաղաքաշինության կոմիտեի նախաձեռնությամբ լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-ն որոշման մեջ:

ՀՀ կառավարության 2024թ. հոկտեմբերի 31-ի 1729-Ն որոշմամբ՝ նախ հստակեցվում է ճարտարապետաշինարարական նախագծերի փորձաքննությունների իրականացման հաջորդականությունը՝ բացառություն սահմանելով դպրոցների եւ մանկապարտեզների համար: Այսպիսով՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը պետք է նախորդի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննությանը: Սակայն դպրոցի կամ մանկապարտեզի կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման ծրագրերի դեպքում հնարավորություն է ստեղծվում նշված փորձաքննություններն իրականացնել զուգահեռ եւ քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության եզրակացությունը տրամադրել նախքան շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությունը:

Քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության եզրակացության հիման վրա համայնքների ղեկավարների որոշմամբ կառուցապատողին կտրամադրվի շինարարության թույլտվություն՝ պայմանով, որ այն ուժի մեջ կմտնի միայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության պետական փորձաքննական դրական եզրակացության տրամադրմանը հաջորդող օրվանից:

«IV ռիսկայնության աստիճանի օբյեկտների դեպքում քաղաքաշինական պետական համալիր փորձաքննությունը տեւում է 3 եւ ավելի ամիս, ինչը պայմանավորված է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման ժամկետով, իսկ շինթույլտվության տրամադրման համար սահմանված է 15-օրյա ժամկետ, սակայն գործնականում ավելի երկար է տեւում: Մինչդեռ դպրոցների եւ մանկապարտեզների դեպքում գործընթացները զուգահեռաբար իրականացնելով՝ ակնկալում ենք, որ կկրճատվի փաստաթղթային փաթեթների շրջանառության, ամփոփման համար ծախսվող ժամանակը: Հետեւաբար շինարարական աշխատանքները մոտ 1-2 ամիս ավելի շուտ կմեկնարկեն: Արդյունքում նպաստավոր պայմաններ կստեղծվեն 300 դպրոց, 500 մանկապարտեզ կառուցելու կառավարության ծրագրի ժամանակին իրագործման համար»,-նշում է Քաղաքաշինության կոմիտեի իրավաբանական վարչության խորհրդական Անդրանիկ Մուրադյանը:

Այն դեպքերում, սակայն, երբ համայնքի ղեկավարի որոշումից հետո 6 ամսվա ընթացքում չներկայացվի նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության պետական փորձաքննական դրական եզրակացություն, Քաղաքաշինության կոմիտեն եւ համայնքի ղեկավարը անվավեր կճանաչեն համապատասխանաբար՝ճարտարապետաշինարարական նախագծի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության եզրակացությունը եւ շինարարության թույլտվությունը:

Քաղաքաշինության կոմիտե

ԿԱՐԵՎՈՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԳԵՐԻՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» եւ «Հայաստան» խմբակցությունները հայտարարություն են տարածել Ադրբեջանում գտնվող գերիների եւ ռազմագերիների վերաբերյալ: Հայտարարությունում ասված է.

«Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության ժողովրդի դեմ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչեւ 2023 թվականի հոկտեմբերի 4-ը իրականացված լայնածավալ ռազմական ագրեսիայի հետեւանքով ամբողջ արցախահայությունը ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի տակ ստիպված եղավ լքել իր պատմական հայրենիքը, որտեղ հայկական քաղաքակրթական ժառանգությունը ունի հազարամյակների պատմություն: Բաքվի ռեժիմի կողմից ցեղասպան քաղաքականությամբ իրականացված արցախահայության զանգվածային բռնի տեղահանումը միջազգային իրավունքի կոպտագույն խախտում է:

Ադրբեջանական ագրեսիայի եւ արցախահայության բռնի տեղահանման հետեւանքով ավելի քան մեկ տարի ապօրինաբար գերության մեջ են պահվում Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունը եւ բազմաթիվ հայազգի գերիներ: Բաքվի բանտում մեր հայրենակիցներին պահելը ոչ միայն Ադրբեջանի հայատյաց քաղաքականության հետեւանք է, որի դրսեւորումները չեն դադարում մինչեւ այժմ, այլեւ առկա բանակցային գործընթացում մարդկային կյանքերը, ազատությունն ու արժանապատվությունը որպես ճնշման միջոց օգտագործելու փորձ:

Բաքվում անցկացվելիք ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի» մասնակիցների կոնֆերանսի 29-րդ նստաշրջանի (COP29) անցկացման զուգընթաց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը

1. Կոչ է անում միջազգային հանրությանը՝ օգտագործել իր ազդեցությունը եւ պահանջել Ադրբեջանի կողմից անմիջապես ազատ արձակել Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությանը եւ մյուս բոլոր հայ գերիներին, ովքեր անօրինական կերպով պահվում են Բաքվում:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանը հորդորում է ակտիվորեն համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ՝հասնելու Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությանը եւ մյուս բոլոր հայ գերիների ազատ արձակմանը:

3. Հիշեցնում է Ադրբեջանի ղեկավարությանը, որ ելնելով միջազգային իրավունքի եւ մարդու իրավունքների հիմնարար դրույթներից՝ Ադրբեջանը պարտավոր է անհապաղ ազատ արձակել բոլոր հայ գերիներին»:

ԱՐՑԱԽՈՒՄ ՈՉՆՉԱՑՎԵԼ Է ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԱՆԹԵՈՆԸ

2023 թվականին՝ արցախահայերի բռնի տեղահանումից հետո, ադրբեջանական ագրեսիան ուղղվեց Ստեփանակերտի հայկական ժառանգության ու հետքի ոչնչացմանը: Ադրբեջանական տելեգրամյան ալիքներում տարածված լուսանկարներից երեւում է, որ ոչնչացվել է նաեւ Ստեփանակերտի զոհված ազատամարտիկների պանթեոնը: Հայտնում են «Գեղարդ» հիմնադրամից:

«Սա առաջին դեպքը չէ, երբ Ադրբեջանը թիրախավորված պղծում եւ ոչնչացնում է Արցախի եղբայրական գերեզմանոցներն ու արցախյան հերոսամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրները»,-ասվում է հիմնադրամի հաղորդագրությունում:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 1 մարդ զոհվել է, 13-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԵԿ-Ը BEPS ԾՐԱԳՐԻ ԵՎՍ ՄԵԿ ՍՏԱՆԴԱՐՏ Է ՆԵՐԴՐԵԼ

Պետական եկամուտների կոմիտեն Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության ՏՀԶԿ Հարկվող բազայի խեղաթյուրում եւ շահույթի տեղաշարժ BEPS ծրագրի եւս մեկ ստանդարտ է ներդրել: Նոր կարգավորմամբ՝ երկրների միջեւ փոխանակվող հաշվետվությունն արդեն հասանելի կլինի նաեւ մեր երկրի հարկային մարմնին:

Կարգավորման համաձայն, եթե բազմազգ կազմակերպության տարեկան համախառն եկամուտը գերազանցում է 750 մլն եվրոն, ապա տվյալ խմբի մայր կազմակերպությունը պարտավորվում է երկրների միջեւ փոխանակվող հաշվետվություն ներկայացնել իր ռեզիդենտության հարկային մարմին: Վերջինս էլ իր հերթին այդ տեղեկությունը փոխանցում է այն երկրների հարկային մարմիններին, որտեղ տվյալ կազմակերպությունն անդամ կազմակերպություններ ունի:

Երկրների միջեւ փոխանակվող հաշվետվության մեջ արտացոլվում են բազմազգ կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններն ու եկամուտները: Այն տեղեկություններ է պարունակում նաեւ անդամ կազմակերպությունների ռեզիդենտության երկրների մասին:

Նշենք, որ այս հաշվետվությունը հարկային մարմնի կողմից օգտագործվելու է բացառապես բարձր ռիսկային դեպքերն ուսումնասիրելու համար: Այն չի կարող հիմք ծառայել հարկ վճարողի հանդեպ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու նպատակով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Բաքվում կայացել է Ադրբեջանի, Ղազախստանի եւ Ուզբեկստանի ղեկավարների հանդիպումը: Դրա ընթացքում նախագահները համաձայնագիր են ստորագրել երեք երկրների կառավարությունների միջեւ Կասպից ծովի երկայնքով կանաչ էներգիայի զարգացման եւ փոխանցման գործում ռազմավարական գործընկերության մասին:

«Նախագիծը նաեւ կկապվի Սեւ ծովի հատակի երկայնքով էներգետիկ մալուխին», - ասել է Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւը:

Պետությունների ղեկավարների մասնակցությամբ տեղի է ունեցել նաեւ «Ադրբեջանի, Ղազախստանի, Ուզբեկստանի եւ Սաուդյան Արաբիայի էներգետիկայի նախարարությունների միջեւ կանաչ էներգիայի զարգացման եւ փոխանցման ոլորտում համագործակցության գործադիր ծրագրի» ստորագրման արարողությունը:

ԱՄԵՆԱԹԱՆԿԸ՝ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԵՋ

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ՝ ՀՈՒՆՎԱՐԻ ՄԵԿԻՑ

Հունվարի 1-ից Երեւանում հանրային տրանսպորտի ուղեվարձն ավելի թանկ է լինելու, քան, օրինակ, Մոսկվայում, Կիեւում, Թբիլիսիում կամ Պրահայում:

Այսօր գործող տրանսպորտային վճարային համակարգը՝ կամ 100 դրամանոց մետաղադրամներ, կամ էլ օնլայն ուղետոմսեր, մայրաքաղաքում իսկական կոլապս է առաջացրել: Հանրային տրանսպորտում ներդրված նոր միասնական տոմսային համակարգն ամբողջությամբ կգործարկվի հունվարի 1-ից:

Կառաջարկվեն վճարման տարբեր եղանակներ՝ թղթային մեկանգամյա օգտագործման QR code-ով տոմսեր, բջջային հավելված, մշտական օգտագործման ավտոբուսային եւ բանկային քարտեր:

Հասկանալու համար, թե հաջորդ տարեսկզբից մայրաքաղաքում որքան է թանկանալու հանրային տրանսպորտի ուղեվարձը, առաջարկում ենք տեղեկանալ՝ ինչ համակարգ է ներդրվելու:

Փետրվարին հայտարարվեց, որ մայրաքաղաքում հանրային տրանսպորտի սակագները էապես կբարձրանան. քաղաքապետարանում շրջանառության մեջ էր դրվել միասնական տոմսային համակարգի նախագիծ, որով տարբեր սակագնային փաթեթներ էին առաջարկվում (մեկանգամյա, մեկօրյա, շաբաթական, ամսական, եռամսյա, տարեկան): Նախագիծը ընդունվելու դեպքում միասնական տոմսային համակարգը ուժի մեջ կմտներ 2024 թվականի աշնանը:

Նախատեսվում էր, որ 100 դրամի փոխարեն ուղեւորները, կախված փաթեթից, կվճարեն 100-ից մինչեւ 260 դրամ: Այն ժամանակ քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանն ասել էր, թե ուղեւորության ինքնարժեքը, ամենահամեստ հաշվարկով, այժմ 220-230 դրամ է:

Ավելի ուշ, քաղաքային տրանսպորտի միասնական տոմսային համակարգի նախագծում փոփոխություններ կատարվեցին. հանրային դժգոհության ֆոնին նախորդ նախագիծը հետ էր կանչվել եւ ուղարկվել լրամշակման:

Լրամշակումից հետո այն ունի հետեւյալ պատկերը. հունվարի 1-ից 1 օրվա ուղետոմսը կարժենա 880 դրամ, 7 օրվան փաթեթը՝ 4800 դրամ, 30 օրվանը՝ 8800 դրամ, 90 օրվանը՝ 23.600 դրամ, իսկ 1 տարվանը՝ 88.800 դրամ:

Ըստ որոշման՝ 1 եւ 7 օրվա ուղետոմսերի դեպքում երթեւեկության քանակը կլինի սահմանափակ՝ համապատասխանաբար 8 եւ 30 անգամ, մյուս փաթեթների դեպքում՝ անսահմանափակ: Տեղեկացնենք նաեւ, որ նշված արժեքները գործում են բացառապես օնլայն տարբերակով ուղետոմս գնելու դեպքում, իսկ ֆիզիկական տոմս գնելու դեպքում դրանք ավելի թանկ են՝ համապատասխանաբար՝ 900, 5000, 9000, 24.000 եւ 90.000 դրամ: Կգործեն նաեւ 90 րոպեանոց ուղետոմսեր՝ 280 եւ 300 դրամ արժեքով:

Նման խառը թվաբանական պրոգրեսիան կարող է կոլապս առաջացնել ոչ միայն տրանսպորտային համակարգում, այլ նաեւ քաղաքացիների գրպանում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԲԱՆԿԱՅԻՆ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԸ» ՄԻԱՑԵԼ Է UBPay ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

«Հայէկոնոմբանկի» միջոցով այսուհետ կարող ես իրականացնել փոխանցումներ դեպի Ռուսաստան եւ հակառակ ուղղությամբ UBPay վճարային համակարգով, ինչպես նաեւ ստանալ գումար Հունաստանից, Կիպրոսից, Իսրայելից, Ուզբեկստանից, Ղրղզստանից արագ եւ պարզ եղանակով՝ առանց հաշվի բացման:

Փոխանցումներ հնարավոր է կատարել ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո եւ ՌԴ ռուբլի արժույթներով հետեւյալ պայմաններով.

- Մեկ փոխանցման առավելագույն գումար՝ 5 մլն ՀՀ դրամ / 500,000 ՌԴ ռուբլի / 10,000 ԱՄՆ դոլար կամ Եվրո
- Մեկ փոխանցման նվազագույն գումար՝ 1,000 ՀՀ դրամ / 100 ՌԴ ռուբլի / 2 ԱՄՆ դոլար կամ Եվրո
- Ամսական առավելագույն սահմանաչափ՝ 20 մլն ՀՀ դրամ / 5 մլն ՌԴ ռուբլի / 50,000 ԱՄՆ դոլար կամ Եվրո

Փոխանցման արժույթից տարբեր արժույթով գումարի ստացման դեպքում միջնորդավճարը կազմում է 0%, հակառակ դեպքում՝ 1%:

Փոխանցված գումարները ՌԴ-ում շահառուները կարող են ստանալ kwikpay.ru կայքում նշված քաղաքներում/սպասարկման կետերում:

Փոխանցված գումարները վավեր են 180 օր:

«ԷՎՈԿԱԲԱՆԿԸ» ՄԻԱՑԵԼ Է «ԻԴՐԱՄԻ» ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ

Սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած ասուլիսում «Իդրամ» ընկերությունը հայտարարեց իր QR ենթակառուցվածքը բացելու մասին: Նույն օրը հայտարարվեց, որ «Էվոկաբանկը» բանկերից առաջինն է, որ միացել է Open QR ենթակառուցվածքին: Այսուհետ 22.500-ից ավելի վաճառակետերում տեղադրված «Իդրամ» QR-ը կարող են իրենց հավելվածներով սքանավորել եւ վճարել նաեւ Էվոկաբանկի հաճախորդները՝ EvocaTOUCH հավելվածի միջոցով:

«Evoca-ն առաջին բանկն է, որը միացել է Open QR նախագծին: Այսուհետ մեր հաճախորդները կարող են կատարել վճարումներ այն բոլոր կետերում, որտեղ գործում է «Իդրամը»՝ պարզապես սքանավորելով «Իդրամի» QR-ն իրենց EvocaTOUCH հավելվածի QR բաժնից: Այս համագործակցությունն ապացուցում է, որ մեր հաճախորդներն ու նրանց հարմարավետությունը մեզ համար առաջնային նշանակություն ունեն»,- նշել է Evocabank-ի Վարչության նախագահի տեղակալ Տաթեւիկ Խաչատրյանը:

«Իդրամ» ընկերության տնօրեն Արսեն Քդենյանը շեշտում է, որ սա նշանակալի իրադարձություն է Հայաստանի ֆինանսական շուկայի համար, քանի որ բոլոր այն ֆինանսական կառույցների հաճախորդները, որոնք կմիանան ենթակառուցվածքին, հնարավորություն կունենան իրենց իսկ ֆինանսական հավելվածներով սքանավորել Իդրամի QR-ը եւ վճարել ավելի քան 22.000 վաճառակետերում», - ասել է Իդրամի տնօրեն Արսեն Քդենյանը:

«Էվոկաբանկի» եւ «Իդրամ» ընկերության միջեւ ստորագրվեց համագործակցության հուշագիր, եւ համակարգն արդեն իսկ հասանելի դարձավ «Էվոկաբանկի» հաճախորդների համար: «Իդրամից» տեղեկացնում են, որ հոգացել են ոչ միայն ֆինանսական-գործընկեր կազմակերպությունների համար ենթակառուցվածքը բացելու եւ համակարգի համապատասխան թողունակություն ապահովելու համար, այլ նաեւ ստեղծել են սպասարկման առանձին ծառայություն, ինչպես բանկերի եւ վճարահաշվարկային ընկերությունների, այնպես էլ 22.500-ից ավելի առեւտրային կետ- գործընկերների հետ սահուն աշխատանքի կազմակերպման նպատակով:

Ընկերությունը, բացելով ենթակառուվածքը, եւս մեկ անգամ հաստատեց որդեգրված կոնցեպտը՝ «Իդրամը» բոլորի համար է:

Ընկերությունները վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՆԿԵՂԾ ԱՐՏԻՍՏՆ ՈՒ ՀՈՒՄՈՐԻ ՎԱՐՊԵՏԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ՍԻՐՎԱԾ ԴԱՍԱԿԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է անդրադառնալ հայ մեծանուն արտիստներին եւ այս անգամ իր ընթերցողին է ներկայացնում սիրված դերասան Հրաչյա Ներսիսյանի կյանքից հետաքրքիր դիպվածներ:

Դերասան Հրաչյա Ներսիսյանը, որը հայտնի է հայ թատրոնում ու կինոյում իր դերակատարումներով, ժողովրդի կողմից մեծ սիրո եւ ուշադրության է արժանացել: Նրա կյանքը հարուստ է տարբեր հետաքրքիր ու յուրահատուկ պատմություններով: Ներսիսյանը թատրոնի եւ կինոյի աշխարհում հայտնի էր իր խորիմաստ դերերով, բայց նրա մասին պատմությունները միաժամանակ ունեն հումորային ու զվարճալի երանգներ:

Հրաչյա Ներսիսյանի կարիերայի ամենահիշարժան պահերից մեկը կապված է իր երիտասարդության տարիներին կատարած առաջին դերերից մեկի հետ: Մեկ անգամ նրա ընկերներից մեկը պատմել է, որ այն ժամանակ, երբ Ներսիսյանը դեռ նոր էր մուտք գործել թատերական ասպարեզ, սկսել առաջին քայլերը թատերական կյանքում, շատ ծանր էր ընդունում իր դերը: Նա գրեթե ամեն դերակատարումից առաջ խոր մտածելու ժամանակ էր տրամադրում դերին, նույնիսկ «պարտավորվում էր» ամբողջական կերպար ստեղծել: Սակայն այդ նույն դերերից մեկը, որով նա նկարահանվել էր մի տխուր կատակերգությունում, դարձավ մի շատ հուզիչ պատմություն: Հրաչյան իր կերպարում այնպիսի ներշնչվածության հասավ, որ մի պահ՝ կատակերգությամբ համեմված տպավորիչ դրվագից հետո, ամբողջ հանդիսատեսը մոռացավ, որ դա պարզապես թատրոն է, եւ մեկ մարդու պես տպավորված սկսեց ծափահարել: Այդ պահը ուներ այնքան մեծ ազդեցություն, որ Ներսիսյանին սկսեցին գնահատել ոչ միայն որպես պրոֆեսիոնալ դերասան, այլեւ որպես իսկական արվեստագետ:

Բացի այդ, Հրաչյա Ներսիսյանը բավականին բազմակողմանի էր. դերասանական տաղանդից բացի նա նաեւ շատ լավ հաղորդավար էր: Ի դեպ, հենց հաղորդավարությամբ էլ նա ժամանակին հայտնի հաղորդումներից մեկում, որտեղ զրուցել էր ու հումորով պատասխաններ տվել:

Այդ հաղորդումը դարձավ շատ դիտվող եւ Հրաչյան հայտնի դարձավ ոչ միայն իր դերերով, այլեւ իր լավատեսությամբ ու բարոյական կեցվածքով:

Հին հայկական ֆիլմերն ընդհանրապես մեծ սեր են վայելում հայ հեռուստադիտողների կողմից: Այդ ֆիլմերից մեկը «Տժվժիկ»-ն է, որտեղ Հրաչյա Ներսիսյանը եւս դերակատարում է ունեցել:

Այս ֆիլմում նա կերպավորում է գլխավոր դերերից մեկը՝ որպես շատ սիրված, բարեսիրտ, բայց միեւնույն ժամանակ փոքր-ինչ միամիտ գյուղացու: Ֆիլմը ստեղծվել է ռեժիսոր Արթուր Հակոբյանի կողմից եւ միտված էր ոչ միայն զվարճացնելու, այլեւ հասարակական եւ մարդկային խնդիրները հումորային տեսանկյունից մատուցելու:

Նրա կերպարը, որը հիմարիկ եւ մի փոքր ինքնահավան էր, բայց միաժամանակ բավականին սիրված ու անմեղ, ամբողջ ֆիլմի ընթացքում արտահայտում էր յուրահատուկ հումորային եւ կատակերգական մթնոլորտ՝ տարված իրական կյանքի փոքրիկ անկումներով ու զվարճալի դեպքերով:

Ըստ պատմությունների՝ Հրաչյա Ներսիսյանը դերակատարումից առաջ շատ մոտիվացված ու լրջորեն պատրաստվում էր՝ մասնավորապես ուսումնասիրելով այն ժամանակվա հայկական գյուղի մարդկանց բնավորությունն ու վարքագիծը: Սակայն ֆիլմի նկարահանումների ընթացքում, նրա հետ մի հետաքրքիր դեպք տեղի ունեցավ: Մի անգամ՝ մի տեսարանի ընթացքում, երբ պետք էր հանդես գալ շատ շուտ, Հրաչյա Ներսիսյանը մտածմունքների մեջ ընկած կանգնել էր՝ շատ երկար ժամանակ մտածելով իր կերպարի մասին, քանի որ ուզում էր այն ստեղծել ամենաբնութագրական ու մաքուր կերպով: Արդյունքում՝ նա իր խոր զգացմունքներով ու վարպետությամբ ֆիլմի ոգին կրող մի ամբողջ կերպար հուշեց՝ դարձնելով այն անչափ յուրահատուկ:

Այդ օրը, երբ նկարահանումները վերջացան, ամբողջ թիմը (ներառյալ ռեժիսորն ու այլ դերակատարները) բարձր գնահատեց Ներսիսյանի խաղը, իսկ նա, իհարկե, դարձավ ֆիլմի ամենասիրված կերպարներից մեկը՝ իր անմեղությամբ եւ անկեղծությամբ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԲԵՅՈՆՍԵՆ ՌԵԿՈՐԴ Է ՍԱՀՄԱՆԵԼ

Ամերիկյան երգչուհի Բեյոնսեն հեղինակավոր «Գրեմմի» երաժշտական մրցանակաբաշխության անվանակարգերում առաջադրման թվի ռեկորդ է սահմանել, հայտնում է BBC-ն:

Նա առաջ է անցել աստղային ամուսնուց՝ռեփեր Ջեյ Զիից: Մինչ այս, Բեյոնսեն եւ Ջեյ Զին առանձին-առանձին «Գրեմմի»-ի առաջադրվել էին 88 անգամ: Սակայն Բեյոնսեի վերջին ալբոմը՝ Cowboy Carter-ը, թույլ է տվել երգչուհուն մեծ տարբերությամբ առաջ անցնել ամուսնուց:

Նա այս տարի առաջադրվել է «Գրեմմի»-ի 11 անվանակարգերում, այդ թվում՝ տարվա ալբոմ, լավագույն քանթրի ալբոմ, իսկ նրա՝ Texas Hold'Em հիթը հավակնում է ճանաչվել տարվա երգ:

Բեյոնսեն տարբեր անվանակարգերում կմրցի Թեյլոր Սվիֆթի, Սաբրինա Քարփենթերի, Բիլի Այլիշի, Քենդրիկ Լամարի, Փոստ Մելոնի եւ Չառլի XCX-ի հետ:

«ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ՎԱՆԴԱԼԻԶՄԻ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ

2024 թվականի նոյեմբերի 8-ին ադրբեջանական թելեգրամ ալիքները սկսեցին տարածել օկուպացված Ստեփանակերտում գտնվող «Մենք ենք մեր սարերը» հուշարձանի լուսանկարները, տեսանյութերը: Տեսանյութերից երեւում է, որ հուշարձանի ետնամասը պատված է մեծաքանակ գրություններով՝ հիմնականում հուշարձան այցելած ադրբեջանցիների անուններ, ազգանուններ, բնակավայրերը ցուցող տեղանուններ, հայերին եւ Հայաստանը ծաղրող գրառումներ: Այս մասին գրել է Monument Watch-ը:

Տեսանյութերից երեւում է, որ հուշարձանի շրջակա տարածքը վնասված է: Միեւնույն ժամանակ նկատելի է, որ ադրբեջանական քարոզչամեքենան նոր թեզ է առաջ քաշում, որ թեպետ հուշարձանը կառուցված է խորհրդային տարիներին ադրբեջանական գումարներով, սակայն այն «դարձել է հայկական անջատողականության խորհրդանիշ», ուստի պետք է ապամոնտաժվի:

Կարող ենք հավաստել, որ ադրբեջանական իշխանությունը չի արգելում Ստեփանակերտ այցելող իր բնակիչներին տարբեր գրություններով պատել հուշարձանը, ինչպես նաեւ կրկին խրախուսում է հուշարձանը քանդելուն ուղղված քննարկումները:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՌՈՆԱԼԴՈՒՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է

Պորտուգալիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ֆերնանդու Գոմեշը գովաբանել է Պորտուգալիայի ազգային հավաքականին եւ հատկապես նրա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուին՝նրան պարգեւատրելով պլատինե մրցանակով:

Նոյեմբերի 11-ին Կրիշտիանու Ռոնալդուն ներկա է գտնվել Quinas de Ouro գալա համերգին, որտեղ արժանացել է Ֆերնանդու Գոմեշի հարգանքին: Նա էլ իր հերթին երախտագիտություն է հայտնել ֆուտբոլիստին՝ պորտուգալական ֆուտբոլն աշխարհում հանրահռչակելու համար:

«Նա ավելի քան 20 տարի ծառայում է Պորտուգալիայի հավաքականին, եւ եթե խոսենք այն մասին, թե ով է ցույց տվել իր սերն ու նվիրվածությունը հավաքականին ներկայացնելու գործում, ապա դա հենց Կրիշտիանու Ռոնալդուն է:

Նա զգում է ազգային հավաքականի շապիկը, զգում է Պորտուգալիան եւ մեր երկրի առաջատար ներկայացուցիչն է: Ուստի մենք կարծում ենք, որ լիովին արդարացի է Կրիշտիանուին պարգեւատրելու պլատինե Quinas-ով: Ես միայն շնորհակալության խոսքեր ունեմ: Շնորհավորում եմ, շնորհակալ եմ»,-ամփոփել է Գոմեշը:

ՀԱՅՏՆԻ Է ԻՍՊԱՆԻԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏԸ

«Ռեալի» կիսապաշտպան Ջուդ Բելինգհեմը ճանաչվել է Իսպանիայի 2023/24 թվականի առաջնության լավագույն ֆուտբոլիստ:

Նա ստացել է Ալֆրեդո Դի Ստեֆանոյի անունով մրցանակը, որը շնորհում է Marca պարբերականը:

Բելինգհեմն անձամբ չի մասնակցել մրցանակաբաշխությանը:

Նախորդ մրցաշրջանում Բելինգհեմը «Ռեալի» կազմում անցկացրել է 28 հանդիպում Լա Լիգայում, խփել է 19 գոլ եւ կատարել 6 գոլային փոխանցում:

Կիսապաշտպանը դարձել է Իսպանիայի առաջնության երրորդ լավագույն ռմբարկուն, իսկ «Ռեալը» նվաճել է չեմպիոնի տիտղոսը:

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի աշխարհի ակումբային առաջնության վիճակահանությունը կկայանա դեկտեմբերի 5-ին, հայտնում է Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) մամուլի ծառայությունը:

Վիճակահանությունը կանցկացվի Մայամիում (ԱՄՆ): Առաջին անգամ աշխարհի ակումբային առաջնությունը կանցկացվի նոր ձեւաչափով, ուղեգիր նվաճած 32 թիմերը կբաժանվեն 8 խմբերի: Մրցաշարը կանցկացվի հունիսի 15-ից հուլիսի 13-ն ԱՄՆ-ում:

● Նոյեմբերի 16-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Երեք ընկեր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-6.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ Հայաստան մուտք գործելիս:

Հայրիկ Ղուկասյան (69 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ԵԱՏՄ մաքսային տարածք օդային տրանսպորտով առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման թույլատրվում է ներմուծել անձնական օգտագործման հետեւյալ ապրանքները (մեկ ֆիզիկական անձի հաշվարկով)՝

ուղեկցվող եւ չուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող ապրանքներ (բացառությամբ էթիլ սպիրտի, ալկոհոլային խմիչքների, գարեջրի), որոնց արժեքը չի գերազանցում 10.000 եվրոյին համարժեք գումարը, իսկ քաշը՝ 50 կգ-ը՝ ներառյալ

ծխախոտ եւ ծխախոտային արտադրանք հետեւյալ չափաքանակներով՝

200 սիգարետ

կամ 50 սիգար (սիգարիլլա),

կամ 250 գրամ ծխախոտ,

կամ նշված արտադրատեսակների տեսականին ոչ ավելի, քան 250 գրամ ընդհանուր քաշով

«Զվարթնոց» օդանավակայան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուղեկցվող եւ չուղեկցվող ուղեբեռում ներմուծվող ալկոհոլային խմիչքներ եւ գարեջուր՝ 3 լիտր: Անհրաժեշտ է հիշել՝ 3 լիտրից ավելի, բայց 5 լիտրից ոչ ավելի քանակությամբ ալկոհոլային խմիչքներ եւ գարեջուր ներմուծելիս 3 լիտր քանակական նորմի գերազանցման մասով ենթակա են վճարման 1 լիտրի դիմաց 10 եվրո միասնական դրույքաչափով գանձվող մաքսատուրքեր, հարկեր:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե որտեղ պետք է դիմի քաղաքացին ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ եւ հրատապ օգնություն ստանալու համար:

Լիանա Սարգսյան
(34 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Լ. Սարգսյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ իրեն անապահով համարող ընտանիքի չափահաս անդամներից մեկը, մյուս չափահաս անդամների գրավոր համաձայնությամբ, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու նպատակով դիմում է փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին)՝ ներկայացնելով դիմում-հայտարարագիր, ընտանիքի անապահովության միավորը հաշվարկելու համար իր ընտանիքի անապահովության բնութագրիչների մասին ամբողջական տվյալները հավաստող փաստաթղթեր:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, մինչեւ 18 տարեկան անդամ ունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 3 +17 + 19
Արմավիր	-1 + 2 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-2 - 5 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +17 + 19
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Երեւան	+ 6 + 8 + 16 + 18

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Եվրոպական խորհրդարանում բացվել է Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված ցուցահանդես, որը կազմակերպել են ԵՄ-ում Հայաստանի ու Ուկրաինայի ներկայացուցչությունները:

Եվրոպական խորհրդարանի անձնակազմն ու այցելուներն առիթ կունենան առաջիկա օրերին վայելելու Սերգեյ Փարաջանովի հատընտիր գործերը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*